

**Ժամկետային ավանդի պայմանագիր N \_\_\_\_\_**  
(ռեզիդենտ իրավաբանական անձանց հետ կնքվող)

Ք. \_\_\_\_\_

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ թ.

«ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» ՓԲԸ-ն, այսուհետ՝ «Բանկ», ի դեմս Գլխավոր տնօրեն՝ Ա.Շ.Խանդկարյանի, որը գործում է Բանկի կանոնադրության համաձայն (եթե մասնաճյուղ է, նշել մասնաճյուղի կառավարչի անունը ազգանունը, որը գործում է մասնաճյուղի կանոնադրության և Բանկի Գլխավոր տնօրենի \_\_\_\_\_ թվականի թիվ \_\_\_\_\_ լիազորագրի հիման վրա), մի կողմից, և \_\_\_\_\_

(իրավաբանական անձի անվանումը)

այսուհետ՝ «Ավանդատու», ի դեմս \_\_\_\_\_ որը գործում է Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուստեք նաև «ԿՈՂՄԵՐ», կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

- 1.1. Սույն պայմանագրով Բանկն Ավանդատուից \_\_\_\_\_ ժամկետով՝ մինչև « \_\_\_\_\_ », \_\_\_\_\_ թ., տարեկան (տարին ընդունելով 365 օրացուցային օր) \_\_\_\_\_ ( \_\_\_\_\_ ) տոկոսադրությամբ որպես ավանդ ընդունում է \_\_\_\_\_ ( \_\_\_\_\_ ) գումար (ավանդի գումարը նշել թվերով և բառերով, նշել ավանդի արժույթը) (այսուհետ՝ Ավանդ), և պարտավորվում է Ավանդատուին վերադարձնել Ավանդը և Պայմանագրով նախատեսված պայմաններով ու կարգով տոկոսներ վճարել դրանից:
- 1.2. Ավանդի գումարի վրա տոկոսները հաշվեգրվում են Ավանդը Բանկ մուտքագրելու հաջորդ օրվանից, մինչև Պայմանագրով նախատեսված ժամկետի ավարտին նախորդող օրը:
- 1.3. Ավանդի դիմաց հաշվեգրված տոկոսագումարները Բանկը վճարում է անկանխիկ կարգով, յուրաքանչյուր ամսվա \_\_\_\_\_ -ին, Ավանդը մուտքագրելու հաջորդ ամսվանից սկսած՝ Ավանդատուի \_\_\_\_\_ Բանկում առկա թիվ \_\_\_\_\_ հաշվին փոխանցելու միջոցով: Եթե տոկոսների վճարման օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա վճարումը կատարվում է հաջորդ աշխատանքային օրը:
- 1.4. Ավանդի գումարը Բանկի կողմից վճարվում է մուտքագրված կամ հետագայում Ավանդատուի պահանջով փոփոխված ավանդի արժույթով, իսկ Ավանդի դիմաց հաշվեգրված տոկոսները վճարվում են ՀՀ դրամով, վճարման օրվա ավանդի արժույթի համար ՀՀ Կենտրոնական Բանկի սահմանած փոխարժեքով:
- 1.5. Սույն պայմանագրի գործողության ընթացքում Ավանդատուն իրավունք չունի փոփոխել ավանդի գումարի չափը կամ այլ անձանց փոխանցել ավանդում եղած դրամական միջոցները:
- 1.6. Ավանդը և տոկոսները, Պայմանագրով նախատեսված ժամկետի ավարտից հետո Ավանդատուի կողմից չստանալու դեպքում, այն մուտքագրվում է Ավանդատուի բանկային հաշվին:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1. Բանկն իրավունք ունի՝**

- 2.1.1. ինքնուրույնաբար տնօրինել Ավանդի գումարը:
- 2.1.2. Ավանդատուի կողմից Ավանդը Պայմանագրի 1.1. կետով սահմանված ժամկետից շուտ պահանջելու կամ օրենքով սահմանված կարգով բռնագանձում տարածելու դեպքում, կատարել հաշվեգրված տոկոսագումարների վերահաշվարկ սույն պայմանագրի 3.2 և 3.3 կետերով սահմանված կարգով:

**2.2. Բանկը պարտավոր է՝**

- 2.2.1. պահպանել Պայմանագրի գաղտնիությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,
- 2.2.2. Պայմանագրի գործողության ժամկետը լրանալու պահից 1(Մեկ) բանկային օրվա հետ վերադարձնել Ավանդն ու հաշվեգրված տոկոսները, փոխանցելով այն Ավանդատուի 1.3. կետում նշված բանկային հաշվին,
- 2.2.3 երեսնօրյա պարբերականությամբ Ավանդատուին տրամադրել Ավանդային հաշվի քաղվածք բացառությամբ այն դեպքերի, եթե հաշվետու ժամանակաշրջանում Բանկը տվյալ հաշիվը չի դեբետագրել կամ կրեդիտագրել:

**2.3. Ավանդատուն պարտավոր է.**

- 2.3.1. Պայմանագիրը կորցնելու, հասցեի, անվան, Ավանդը տնօրինող անձանց փոփոխության դեպքերում անհապաղ գրավոր տեղյակ պահել Բանկին՝ ներկայացնելով համապատասխան փաստաթղթերը,
- 2.3.2. պահպանել Բանկի կողմից սահմանած բանկային կանոններն ու Պայմանագրի բոլոր պահանջները:

**2.4. Ավանդատուն իրավունք ունի.**

- ա) պահպանելով սույն պայմանագրի 3.2 և 3.3 կանոնները, Բանկից պահանջել ժամկետից շուտ վերադարձնելու Ավանդի գումարը.
- բ) Բանկից պահանջել Ավանդի գումարի դիմաց վճարելու տոկոսներ՝ սույն պայմանագրի 1.1. կետով որոշված չափով:

**3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ**

- 3.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման և Ավանդատուի կողմից նախատեսված ավանդի գումարը ներդնելու պահից և գործում է մինչև Պայմանագրի 1.1. կետում նշված ժամկետի ավարտը:
- 3.2. Պայմանագրով սահմանված ժամկետից շուտ Ավանդատուի կողմից Ավանդը հետ պահանջելու դեպքում, Բանկի կողմից տոկոսներ չեն վճարվելու, իսկ նախկինում վճարված (հաշվեգրված) տոկոսագումարները Բանկն իրավունք ունի անվիճելի կարգով գանձել Ավանդի գումարից:
- 3.3. Ավանդատուի կողմից Ավանդը սույն պայմանագրի 1.1. կետով սահմանված ժամկետից շուտ պահանջելու դեպքում, Ավանդատուն Բանկին վճարում է տուգանք՝ Ավանդի գումարի \_\_\_%-ի չափով, որը Բանկն իրավունք ունի անվիճելի կարգով գանձել Ավանդի գումարից:

**4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ- ՄԱԺՈՐ)**

- 4.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո և որը Կողմերը չէին կարող կանխատեսել և կանխարգելել:

**5. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

- 5.1. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն զուգահեռ հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակներից յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:
- 5.2. Պայմանագրին կից լրացումներն ու փոփոխություններն վավեր են, եթե դրանք կազմված են գրավոր, ստորագրված են դրա լիազորությունն ունեցող անձանց կողմից և վավերացված են կնիքներով:
- 5.3. Պայմանագրով Կողմերի ուղղարկված ցանկացած ծանուցում կամ հաղորդագրություն պետք է կատարվեն գրավոր: Այդպիսի ծանուցումը կամ հաղորդագրությունը համարվում է պատշաճ ձևով ուղղարկված, եթե այն հասցեատիրոջը առաքված է առձեռն (ցրիչի միջոցով), պատվիրված նամակով կամ հեռագրով՝ սույն պայմանագրով նշված հասցեով, վավերացված է Կողմերի համապատասխան կնիքներով և ստորագրված իրավասու անձանց կողմից:
- 5.4. Պայմանագրով կամ նրա կապակցությամբ ծագած բոլոր վեճերը կողմերը լուծելու են բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքում՝ դատական կարգով:
- 5.5. Ավանդը կամ նրա վրա հավելագրված և Ավանդատուի կողմից չստացված տոկոսագումարները բանկային հաշվին փոխանցելուց հետո, նշված գումարների վրա տարածվում է տվյալ պահին Բանկում գործող բանկային հաշվի սպասարկման իրավական ռեժիմը, և կողմերի իրավահարաբերությունները կարգավորվելու է բանկային հաշվի պայմանագրով, ներքին կանոններով և սակագներով:

**6. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Բանկ**

**Ավանդատու**

«ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՍԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» ՓԲԸ

\_\_\_\_\_

ՀՀ ք. Երևան 0010 Մ. Մկրտչյան փող. 12

Հասցե \_\_\_\_\_

Թ/հ No 103002102384 ՀՀ ԿԲ

\_\_\_\_\_

Հեռախոս 54-59-64

\_\_\_\_\_

ՀՎՀՀ 02540791

\_\_\_\_\_

Գլխավոր տնօրեն՝

\_\_\_\_\_ Ա.Շ. Խանդկարյան

\_\_\_\_\_

Կ. Տ.

Կ.Տ.